

29.06.2015 14:09



Հարեւանի ոտքը չի՞ կոտրել, արդարացվածն ասում է՝ «նետ, նո, ոչ» Երեւանաբնակ Հովսեփ Ադամյանը 2013թ. հոկտեմբերի լույս 17-ի գիշերը Տիգրան Մեծի 1-ին նրբանցքում հանդիպում է հարեւաններին՝ Է. Գասպարյանին եւ Ա. Թեքնեյանին, նրանց հրավիրում իրենց տուն: Քրեական գործի նյութերի համաձայն, Ա. Թեքնեյանը եւ Է. Գասպարյանն ընդունել են հրավերը, օդի եւ սննդամթերք են գնել: Հարեւանի տանը միասին հաց են կերել ու ակոհով օգտագործել: Հընթացս, Ա. Թեքնեյանը նախատել է Է. Գասպարյանին՝ ավելորդ շռայլություններ թույլ տալու համար, ինչը հունից հանում է Հովսեփին: Վերջինս մեկ անգամ ապտակել է հարեւանին՝ Թեքնեյանին եւ պահանջել, որպեսզի նա հեռանա իր տնից: Հարեւանը գնացել, ապա վիրավորված վերադարձել է, տան շեմի մոտ սեռական բնույթի հայհոյանքներ տվել Հ. Ադամյանի հասցեին: Հ. Ադամյանը իջել է դուրս, մոտեցել Ա. Թեքնեյանին, «բուրձ անարկայով» հարվածել է նրան եւ Ա. Թեքնեյանի առողջությանը պատճառել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող, կոտրել էր հարեւանի ոտքը: Գործով նախաքննության մարմինը ապացուցված էր համարել նաեւ այն, որ Հովսեփը հաջորդ օրը գնացել է Ա. Թեքնեյանենց տուն՝ ոմն Գրիգորի հետ, ներկայացրել էր նրան որպես բժիշկ. «Վերջինս ուսումնասիրելով Ա. Թեքնեյանի վնասվածքները՝ խորհուրդ է տվել տանել հիվանդանոց, որից հետո զանգահարել են շտապօգնություն: Շտապօգնության աշխատակիցները Ա. Թեքնեյանին տեղափոխել են հիվանդանոց»: 2013թ. հոկտեմբերի 17-ին կատարված հանցագործությունից 8 ամիս հետո Հովսեփ Ալբերտի Ադամյանին հրավիրում են ոստիկանության Քննչական գլխավոր վարչության Երեւանի էրեբունու քննչական բաժին եւ նույն օրն էլ ձերբակալում, որպես կասկածյալի: Ոստիկանության իր միջնորդությունը հիմնավորում է նրանով, որ անձի կողմից հանցագործության կատարումը կամ կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով է ձերբակալել: 2014 թվականի հունիսի 6-ից նրա պաշտպանությունը ստանձնում է Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբան Արթուր Ալիխանյանը: Հանրային պաշտպանին ներգրավելուց հետո էլ Հովսեփ Ադամյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվում կալանքը: Հանրային պաշտպանը դրա դեմ առարկում է, քանի որ, ըստ նրա, չկար հիմնավոր կասկած՝ դրա բացակայության հիմքով, ինչպես նաեւ նախաքննության մարմնի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ

հանցագործության կատարման օրվանից հետո շուրջ 8 ամիս գտնվել է ազատության մեջ, հետեւաբար, չի ունեցել նախաքննության մարմնից խուսափելու կամ նախաքննությանը խոչընդոտելու նպատակ: Ըստ պաշտպանի. «Եթե ունենար խոչընդոտելու նպատակ, ապա վաղուց այդպիսի փաստեր կլինեին, բացի այդ, տուժողի հետ առերեսում չի կատարվել, եւ տուժողն էլ չի ներկայանում վարույթն իրականացնող մարմնին, որով եւս մեկ անգամ հիմնավորվում է հիմնավոր կասկածի բացակայությունը, իմ պաշտպանյալի առնչությունը կատարված «հանցագործության» հետ»: Էրեբունու դատարանը, սակայն, փաստաբանի առարկությունները հաշվի չի առնում: Պաշտպանը դիմում է, որպեսզի Հովսեփ Ադամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի հանցակազմի բացակայության եւ ապացույցների անբավարարության հիմքով: ՀՀ ոստիկանության Էրեբունու քննչական բաժնի ավագ քննիչ Ժ. Հակոբյանը պաշտպան Ա. Ալիխանյանի միջնորդությունն ամբողջությամբ մերժել է՝ անհիմն լինելու պատճառով: Ըստ հանրային պաշտպանի, 2014թ. հոկտեմբերի 8-ին քրեական գործն ընդունվել էր Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Գաբրիելյանի վարույթ: Շարունակությունը տես սկզբնաղբյուր կայքում:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```